

ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ
ԱՐԺ. Տ. ՎԱՐԴԱՆ ԱԻԱԳ ՔՀՆՅ. ՏԻԼԿԵՐԵԱՆԻ
1911-2009

Այսու հոգեկան անհուն վշտով կը հաղորդենք Թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծխական Խորհուրդներուն, Տիկնանց Միութեան Մասնաճիւղերուն, Թեմական Պարագամաւորներուն, յարակից բոլոր կազմակերպութիւններուն եւ մեր համայն հաւատարացեալ ժողովուրդին, թէ կարճապէս հիւանդութենէ ետք Շաբաթ, Մայիս 2ին, 2009 ի Տէր Հանգեաւ Արեւմտեան Թեմէն ներս երկարամեայ նուիրեալ ծառայութիւն ունեցող եւ հանգստեան կոշուած բազմավաստակ հոգեւորական եւ գրող՝ Արժ. Տ. Վարդան Աւագ Քհնյ. Տիւլկերեան:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրպէրեանի գլխաւորութեամբ հանգուցեալ Տէր Հօր Թաղման Տան Կարգը պիտի կատարուի Կլէնպէյլի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ՝ Ջորթջաքթի, ՄԱՅԻՍ 6ի երեկոյեան ժամը 5:00ին, իսկ Սուրբ Պարարագը պիտի սկսի երեկոյեան ժամը 6:00ին, որու ընթացքին Առաջնորդ Արքայական Հայրը պիտի կատարէ Վերջին Օծումը:

Թաղման Կարգը պիտի կատարուի յաջորդ օրը կէսօրէ ետք ժամը 1:00ին Ֆրէյնոյի ՄԱՄԻՍ-ԱՐԱՐՈՍ գերեզմանատան մէջ՝ Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ, Արժ. Տ. Արշէն Աւագ Քհնյ. Այվապեանի գլխաւորութեամբ:

Հոգելոյս Տէր Վարդանի դստեր՝ Տիկին Սոնիկ Քէշիշեանի փափաքին համաձայն, փոխան ծաղկեպսակի նուիրաբուրութիւնները պիտի կատարուին ի նպաստ Արեւմտեան Թեմի Խնամակալութեան Ծրագրին (Stewardship Program): Նուիրաբուրութեն կը խնդրուի իրենց չէքերը գրել:

WESTERN DIOCESE - STEWARDSHIP PROGRAM անունով եւ ղրկել
Առաջնորդարան հետեւեալ հասցեով.-

WESTERN DIOCESE-ARMENIAN CHURCH
3325 N. GLENOAKS BLVD.
BURBANK, CA 91404

Թող Աստուած Իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ նուիրեալ սպասաւոր եւ բազմավաստակ գրող՝ Արժ. Տ. Վարդան Աւագ Քհնյ. Տիւլկերեանի հոգին եւ Սուրբ Հոգին մխիթարէ ի դուստրը եւ փեսան՝ Սոնիկը եւ Գեորգը, հարազատները եւ մեզ՝ բոլորս:

«Յիշատակն արդարոց՝ օրհնութեամբ եղիցի»:

ՀԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԺ. Տ. ՎԱՐԴԱՆ ԱԻԱԳ ՔՀՆՅ. ՏԻԼԿԵՐԵԱՆԻ

Աւագանի անունով Բիւզանդ, Արժ. Տ. Վարդան Աւագ Քհնյ. Տիւլկերեան ծնած է Տարփանէլ Մայիս 15-ին, 1911: Հայրը մահացած է իր ծնած օրը:

1914-ին ընտանեօք տարագրուած են Իսմիր եւ ինք ականատես եղած է Եղեռնի ջարդերուն: 1922-ին Իսմիրի ջարդէն հրաշքով ապաստուած՝ մանկութիւնը ապրած է Աթէնքի մէջ, Յունաստան: 1926-ին ընտանեօք կը հաստատուին Աղեքսանդրիա, Եգիպտոս, ուր շրջանաւարտ կ'ըլլայ Պօղոսեան Ազգային Վարժարանէն: Իսկ 1928-ին կ'աւարտէ Պէրպէրեան Գոլէճը: Իր ուսուցիչները եղած են Ռեթէոս Պէրպէրեանի վաւակները՝ Օննիկ եւ Շահան, Նիկոլ Աղբալեան եւ Շանթ:

Ուսուցչական պաշտօն վարած է Պօղոսեան, Հայկապեան, Մխիթարեան եւ այլ կրթարաններու մէջ: Իսկ դպրապետութեան պաշտօններ վարած է Առաքելական եւ Կաթողիկէ Եկեղեցիներու մէջ: Տէր Հայրը շարականագէտ է եւ ծանօթ հայկական եւ

երոպական ձայնագրութեան: Կ'աւարդէ Յունական երկրորդական վարժարանը եւ երեք տարի Աթէնքի մէջ գրականութեան եւ փիլիսոփայութեան դասընթացներուն կը հետեւի եւ կը վկայուի:

1939-ին կ'ամուսնանայ Զապէլ Թոգաթլեանի հետ եւ հայր է երկու դստրերու, մեծ հայր՝ երեք թոռներու եւ երկու ծորերու: Մեծ դուստրը մի քանի տարի առաջ մահացաւ Ֆրէզնոյի մէջ:

1957-ին կը ձեռնադրուի Քահանայ եւ կը վերակոչուի Տ. Վարդան: Հովուական պաշտօն կը վարէ Արեւմտեան Թեմէն ներս եւ յարկապէս երկար տարիներ Իսթ Լոս Անճելըսի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ:

Աշխատակցած է օրաթերթերու, շաբաթաթերթերու եւ պարբերականներու: Արեւ, Յոսուաբեր, Պայքար, Նայիրի, Մարմարա, Նոր Օր, Ապագայ, Նոր Կեանք, Գեղարդ, Սիոն, Էջմիածին եւ այլ թերթերու:

Հրատարակուած Երկեր

«Կեանքը Գերեզմանէն Անդին», «Կիրակնօրեայ Խոհեր», «Խաչին Ճանապարհը», «Կեանք եւ Յաւերժութիւն», «Մտասելեռումներ», «Դէպի Նոր Հորիզոններ», «Շողարձակ Խոհեր եւ Տիպարներ», «Ճառագայթող Հոգիներ», «Անկախ Հայաստան», «Աստուած Իմ Կեանքս Է», Արձակ եւ Ջափածոյ Մանրավէպեր, ինչպէս նաեւ Փրոֆ. Բրշ. Արա Սրկ. Աւագեանի թարգմանութեամբ անգլերէն երեք հատորներ:

Կարակերգութիւններ

«Անկատար Ամուսնութիւնը», «Գող Ծառաները», «Համաճարակը», «Վարժապետ-տը», «Արեւնապետը», «Վաւաշոյր Ամուսինը»:

Ունի երեք Անգլերէն հատորներ: Վերջին գիրքը՝ Սիրոյ Յեղափոխականը, 500 էջ, լոյս պիտի տեսնէր մօտ ապագային:

Տէր Հօր գրական գործունէութեան 45-ամեայ Յոբելեանը նշուեցաւ 30 տարի առաջ: Իսկ Կիրակի, Դեկտ. 14ին, 2003 Թեմակալ ռաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէր-տէրեանի նախագահութեամբ Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ պաշտօնապէս նշուեցաւ իր գրական գործունէութեան 70ամեակը եւ ծննդեան 92րդ տարեդարձը:

Արժ. Տ. Վարդան Աւագ Քհն. Տիւրքիեան Երջանկայիշատակ Տ. Տ. Վալգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ պարգեւատրուած է Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ Շքանշանով՝ առ ի գնահատութիւն իր գրական բեղուն գործունէութեան: Նոյնպէս ստացած է Աւագ Քահանայի պատիւ եւ լանջախաչ: ԴԻԻԱՆ